

# ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի շնորհավորական ուղերձը Կանանց միջազգային օրվա կապակցությամբ

07.03.2017



Հարգաբաժան տիկնայք, սիրելի մայրեր և տատիկներ, քույրեր ու դուստրեր, ընդունեք իմ անկեղծ ու ջերմագին շնորհավորանքները, Կանանց միջազգային օրվա՝ Մարտի 8-ի կապակցությամբ:

Միբելիներս, այս տոնն իրապես բարության տոն է, քանզի դուք դարձել եք սիրո, բարության, հոգատարության և անմնացորդ նվիրումի խորհրդանիշ:

Թանկագին մայրեր, ձեր քնքուշ ուսերին է դրված ընտանիքում երեխաների դաստիարակության, նրանց հոգեկերտվածքի, ազգային և համամարդկային

արժեհամարկարգի ձևավորման դժվարին, բայց պատվաբեր ու կարևորագույն գործը:

Հպարտությամբ ու սիրով եմ բարձրաձայնում մեր պետականության, ազգային արժեքների և հայ ընտանիքի պահպանման գործում ձեր կարևոր դերակատարության մասին: Մայրական սիրով ու հոգատարությամբ, գալիք օրվա հանդեպ ունեցած լուսավոր հավատով, դուք դարձել եք հայ ընտանիքի ամրության հիմնասյունը, դաստիարակել եք ուշիմ ու հայրենասեր զավակներ: Դրսևորել եք հայ կնոջը բնորոշ անսպառ բարություն, դժվարություններին դիմակայելու և հաղթահարելու ունակություն և անհատնում լավատեսություն:

Հայ ազգի դարավոր պատմության ընթացքում շատ մեծ է եղել ձեր դերակատարումը նաև մեր ազգի և՛ բարոյական, և՛ ռազմական հաղթանակների, ձեռքբերումների, երկրի շենացման ու հզորացման գործում: Տա Աստված, որ այսուհետ բոլոր հայուհիներն ապրեն կապույտ երկնի ներքո, զբաղվեն միայն իրենց զավակների դաստիարակությամբ, նախընտրելի ու ստեղծագործ աշխատանքով՝ ի բարօրություն սեփական ընտանիքի, ի շահ սիրասուն հայրենիքի:

Եթե երբեմն-երբեմն թացվել են ձեր աչքերը մեր երկրի սահմանների անհանգիստ վիճակի հետևանքով, մենք հայցում ենք ձեր ներողամտությունը և հավաստում, որ հայոց այրերը արժանապատվորեն հսկելու են ձեր խաղաղ կեցությունը և ապահովելու են ձեր կանաչ գարունները:

Միբելիներս, մարզային իշխանությունները կանեն հնարավոր ամեն բան, որ թեթևացնեն ձեր հոգսերը, որպեսզի դուք շարունակեք մնալ կանացի ու հմայիչ, լինեք անհոգ ու

պաշտպանված, որպեսզի միշտ փայլեն ու երջանկությամբ շողարձակեն աչքերը ձեր:

Վայոցձորցի սիրելի տիկնայք, մայրեր ու տատիկներ, քույրեր ու դուստրեր, կրկին շնորհավորում եմ ձեզ գարնանաբույր այս տոնի կապակցությամբ, մաղթում եմ անամպ ու ծաղկաշատ գարուններ, ընտանեկան չխամրող երջանկություն ու անսպառ սեր:

Միբով ու հարգանքով՝

*ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյան*